ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ ԿԻՄ ԲԱԼԱՅԱՆԻ՝ 2018Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 117-րդ հոդվածի 13-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 3-րդ հոդվածի պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանը փաստում է, որ 2017թ. հոկտեմբերի 15-ին լրացել է ՀՀ սահմանադրական դատարանի անդամ պարոն Կիմ Բալայանի պաշտոնավարման տարիքը: Սակայն պարոն Կիմ Բալայանը պաշտոնավարման տարիքը լրանալու պահին մասնակցել է գործի դատաքննությանը և տվյալ գործով զեկուցող է եղել մինչև 2018թ. հունվարի 30-ը:

ՀՀ սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

Արձանագրել, որ 2018թ. փետրվարի 1-ից դադարում են ՀՀ սահմանադրական դատարանի անդամ պարոն Կիմ Բալայանի լիազորությունները և նրա տեղը համարվում է թափուր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

30 հունվարի 2018 թվականի
ՍԴԱՈ-6